

պիտութեան համար նշանաւոր հեղինակներու բանաստեղծութիւններով, ոտանաւոր եւ արձակ, գեղեցիկ ու իմաստանլից ասացածքներով ճոխացնել բովանդակ գործքը: Աւելորդ է հոս տարեցոյցիս աշխատակիցներուն անունները եւ անոց գրութիւնները մի առ մի յառաջ բերել: Բանասիրական ծանօթութիւններն ալ ուշագրաւ են: Արդի հայերէնի վրայ «Աշխարհաբարը ԹԹ. դարէն առաջ», վերնագրով, գեղեցիկ, ամբողջ եւ գիրաբանական ռոմով գրուած յօդուած մը գրաւած է տարեցոյցիս 51—63^ր էջերը հրապարակագիր Հրանտ Ասատուրի գրածն է. մտադիր ընթերցողը կը գտնէ հոն իր մայրենի լեզուին համառօտ պատմութիւնը, միջնագարեան կամ ռամկօրէն հայրենի զարգացման աստիճանները: Տարեցոյցիս մէջ Հրատարակիչը մերթ ընդ մերթ քանի մը հայերէն բառերու ստուգաբանական մեկնութիւնը դրած է երբեմն «բառգիրքէս», ստորագրութեամբ. ասոնք են՝ հայերէն խթում [խթեմ] եւ նաւակապիք (էջ 15), պղինձ (էջ 36), եւ մահաբեռ (էջ 199) բառերը. ի վերջոյ «վարդապետ», բառին մասին յայտնուած կարծիքները (էջ 153): Թէ որչափ գոհացուցիչ են տրուած մեկնութիւնները՝ մեր մասնախառնականին սահմանէն դուրս է այս կէտը քննելը: Տարեցոյցիս գլխաւոր մէկ առաւելութիւնը կազմող յատկութիւնն ալ պատկերազարդ ըլլալն է, առաւելութիւն մը, որ անհրաժեշտ հարկաւոր է գրքին ընդունելութեանը համար: Բազմաթիւ նշանաւոր անձինքներու լրսատիպ պատկերներովը զարդարուած են տարեցոյցիս զանազան էջերը, կարի համառօտ տեղեկութեամբ իւրաքանչիւրին վրայ, ոմանց գրութիւններէն ալ հատուածներ յառաջ կը բերուին երբեմն: Ամենէն սկիզբը գրուած է Օրմանեան Ս. Պատրիարքը, իր գրաստանին առջեւ բազմած, որուն կը յաջորդեն հետզհետէ Մամիկեան Եպ. Մարկոսեան, Հ. եւ Զ. Ասատուր, Է. Գաբրիէլ Կ. Վ. Մէնէ-վիշեան, Դր. Վահրամ Թորգոմեան, Յովհ. Շամոտանեան, Գրիգոր Շամոտանեան ընդարձակ կենսագրականով, Դր. Սամաէլ խան՝ իջեայր տարեցոյցիս հեղինակին, Դր. Միհրան Զարդաբեան եւն, վերջապէս չենք կրնար առանց յիշելու անցնել 1907ի հանգուցեալներու մահացուցակը ժամանակագրական կարգաւ, ուր հեղինակը իւրաքանչիւրին համառօտ կենսագրական մը եւս կցած է:

Ահա տարեցոյցիս համառօտ ստուերակ, գիծը, զոր ներակայացընենէս վերը՝ հետեւեալ գիտութիւնը ընել կը բաղձանք: Բնական է որ

գիրք մը որչափ նորութիւններով եւ պէսպիսութիւններով զարդարուած է, այնչափ աւելի դժուարին է անոր գործածութիւնն, երբ յօրինուածական կարգով կատարելագործուած չէ: Անել յարիւրիւթիւ մըն է, իմողուած ամէն տե. սակ նորութիւններով, ուր ընթերցողը կը խառնափի բանը մը փնտռած ատեն եւ կը ստիպուի տարեցոյցը ծայրէ ծայր թերթել: Չենք գիտեր, ինչո՞ւ ներկայ հաստիս զրկուած է նիթերու ցանկէ, մինչդեռ Ա. տարին ունէր այս առաւելութիւնն: Ասկէ զատ գրքին տարեցուցական բաժինը ցիր ու ցան զետեղուած է, ընդհատուած պէսպէսն ինքերով: Այս ալ կարծենք դժուարութիւն կը պատճառէ տարեցոյցիս գործածութեանը: Չենք կարծեր թէ հեղինակը իբրեւ նորութիւն ընտրած ըլլայ այս մեթոդը: Կը յուսանք թէ այս թերին ալ կը դարմանուի յաջորդ տպագրութեանց մէջ: Կը խոստովանիք որ պատկանին յաջող եւ օգտակար գտանք Թեոգիկի աշխատութիւնը եւ իրաւէ՞ «տարեցոյցներու տարեցոյցը» կրնանք անուանել: Մենք ապահով ենք, որ Հրատարակիչը իւր նպատակին կը հասնի եւ ընթերցողին օգտակար ծառայութիւն կը մատուցանէ տարեցոյցիս ընթերցումը: Զերմ կը յանձնարարենք ամենուն «Ամենուն տարեցոյցը» եւ արտայայտել մաղթենք հեղինակին յաջողութիւն իւր օգտակար ձեռնարկին մէջ:

Ն. Պ. Փ.



ԲՈՎԱՆ ԴԱՎԱՆԻԹԻՆ

ԻՐԱՆԱՐԱՆՈՎԱՆ — Սահմանք եւ կանոնք. 161:

ՄԱՏԵՆԱՐԱՆՈՎԱՆ — Կիւրդին կաթողիկոս վրաց. 166:

— Միսթիար Գօշի Դատաստանագիրքը եւ Հայոց հին քաղաքացիական իրաւունքը. 172:

ԿԵՆՍԱՐԱՆՈՎԱՆ — Սարգիս Պրեմի. Սարաֆեան եւ իւր ժամանակը 1720—1775. 176:

ԼԵԶՈՒՆԱՐԱՆՈՎԱՆ — Անգլոս զաւառաբարբառը. 181:
— Ստուգաբանական ցետագոտութիւնք. 186:

ՊԱՏՄԱՆԱՆ — Առաջին Ռեդարտացի եւ Սրամէ. 189:

ՄԱՏԵՆԱՐԱՆՈՎԱՆ — Թէոդիկ. Ամէնուն տարեցոյցը, զբօսալի ու պիտանի. 191:



ՀՐԱՍԱՐԱՆԻԶ ԵՒ ՊԱՏՄԱՆԱՆԱՆՈՒ ԻՄԱՐԱՆԻՐ

Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

Վ.Ի.Ե.Ն.Ն. ՄԻԻԲԵՐԵՐԵՆԱ ՅԳԱՐԻՆ